ԲՅՈՒԼԵՏԵՆ

Ապրիլ 2025թ.

Խորհրդի Նիստ

Ապրիլին գումարվել է Պալատի խորհրդի 3 նիստ՝ 03.04.2025թ.-ին, 21.04.2025թ.-ին և 29.04.2025թ.-ին:

0**3.042025թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 10 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, օրենքի ուժով և դիմումի համաձայն Պալատին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի հաշվապահական հաշվառման, Որակավորման, Հարկային և իրավական այլ հարցերի, Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովների 2024թ. տարեկան գործունեության հաշվետվությունները հաստատելու, Պալատի անդամի՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:

21.04.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 9 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձանց անդամակցությունը դիմումի համաձայն դադարեցնելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու,Պալատի գործադիր տնօրենի 2024թ. տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները:

29.04.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 6 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, դիմումի համաձայն Պալատին անդամակցությունը դադարեցնելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովի անհատական կազմը համալրելու, Պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու, Պալատի նոր խմբագրությամբ կանոնադրությանը հավանություն տրամադրելու և ժողովի հաստատմանը ներկայացնելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 04.03.2025թ.-ին, որում աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել ընդհանուր թվով 11 անձի **:**

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 04.04.2025թ.-ին և 28.04.2025թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատել ընդհանուր թվով 5 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

10.04.2025թ.-ին տեղի է ունեցել «ՀՀՄՍ 12 – Շահութահարկեր» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**

11.04.2025թ.-ին տեղի է ունեցել «Տրանսֆերային գնագոյացման վարչարարություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



16.04.2025թ.-ին տեղի է ունեցել «Շահութահարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Գոհար Օհանյանը:**



17.04.2025թ.-ին տեղի է ունեցել «Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման ընթացակարգերի համառոտ ներկայացում (Օրենսգիրք, կրկնակի հարկումը բացառող Համաձայնագրեր): Հարկման ընթացակարգերին վերաբերող հարցերի, խնդիրների քննարկում»թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Յանիկյանը:**

18.04. 2025թ.-ին տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկի վերջին փոփոխությունները, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը:**



25.04.2025թ.-ին տեղի է ունեցել «ISQM1- Որակի կառավարման միջազգային ստանդարտն 1» թեմայով դասընթացը: Այն վարում էին **Էմիլ Վասիլյանը և Լիլիթ Մայիլյանը:**



ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ

2025թ. ապրիլի 14-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի է ունեցել հերթական միջոցառումը՝ նվիրված որակավորման կրթական ծրագրի դժվարին փուլը պատվով հաղթահարած և պահանջվող չափանիշներին համապատասխանության արդյունքում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած անձանց որակավորման վկայականների հանձնմանը: Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը և որակավորում ստացած մասնագետները:

ՀԱԵԽ հերթական նիստ

2025թ. ապրիլի 16-ին տեղի է ունեցել Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը:
Նիստը նախագահում էր ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը: Նիստի ընթացքում հաստատվել են ՀԱԵԽ մասնագիտական էթիկայի, ԱՄՍ նախագծերի փորձաքննության, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հանձնաժողովների 2024թ. գործունեության հաշվետվությունները և 2025թ. աշխատանքային ծրագրերը: Հաստատվել է նաև կրթության հանձնաժողովի անհատական կազմի փոփոխության վերաբերյալ որոշումը: Քննարկվել է նաև ՀՄԴ ցանցային անդամության համար կազմակերպության դիմումի ներկայացման ժամկետի վերանայման հարցը:
Նիստին մասնակցում էին նաև Պալատի հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահ Ավետիք Մովսիսյանը և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:



ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2025թ. ապրիլի 22-ին տեղի է ունեցել Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը: Օրակարգում Կառույցի գործունեության առաջնահերթ ուղղությունների որոշումն էր, որի վերաբերյալ ելույթով հանդես է եկել ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը: Ծավալվել է քննարկում և կայացվել համապատասխան որոշում:
Նիստին մասնակցում էին նաև Պալատի խորհրդի անդամներ Հովհաննես Պետրոսյանը, Արթուր Հարությունյանը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը: